Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ <<ՀՀ Վայոց ձորի մարզի Զառիթափի միջնակարգ դպրոց»

ՊՈԱԿ-ի մաթեմատիկայի (15 դասաժամ), ֆիզիկայի (13 դասաժամ), տեխնոլոգիայի (3 դասաժամ), երաժշտության (2 դասաժամ), քիմիայի (11 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին: Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

դիմում (Ձեւ 1),

մեկ լուսանկար 3x4 չափի,

բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

անձը հաստատող փաստաթուղթ,

«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),

ինքնակենսագրություն (Ձեւ 5),

այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,

հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք: Փաստաթղթերն ընդունվում են հոկտեմբերի 4ից մինչեւ հոկտեմբերի 17-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա հոկտեմբերի 19-ին՝ ժամը 14:00-ին, ՀՀ Վայոց ձորի մարզի Զառիթափի միջնակարգ դպրոցում,

հասցեն՝ գ. Զառիթափ, փ. 8, շ.1:

Տեղեկությունների համար զանգահարել՝ 044 60 40 10 հեռախոսահամարով: